ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ **2020** ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01.2020թ.-31.12.2020թ.)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ

Պետական և համայնքային շահերի ներդաշնակեցման, մարզպետարանի, պետական կառավարման համակարգի այլ մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցվածության ապահովման նպատակով իրականացվել են անհրաժեշտ աշխատանքներ:

Կայացել է մարզի խորհրդի թվով 1 նիստ(29.12.2020թ.) որտեղ քննարկվել է ստորաբաժանումների կողմից 2020 թվականին կատարված աշխատանքների մասին հարցը:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարմանև ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2020 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 649-Ա և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 03-Ն հրամանների ու դեկտեմբերի 25-ի թիվ 01/17.1/24896-19 հանձնարարականի՝ 2020 թվականին ապահովվել է ծրագրով նախատեսված մարզի թվով 11 համայնքների, այդ թվում Ախուրյան, Մարմաշեն, Անի, Առափի, Հառիճ, Մեղրաշեն, Ազատան, Արևշատ, Ոսկեհասկ, Տուֆաշեն և Ախուրիկ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացման աշխատանքների կատարումը:

Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունն իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն և 2020 թվականի ապրիլի 9-ի թիվ 03-Ն հրամաններով հաստատված հարցաշարերին համապատասխան:

Իրավական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ և հսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել և գործողության մեջ են դրվել արձանագրված խախտումները վերացնելու ժամանակացույցներ, համաձայն որոնց սահմանված ժամկետներում ամբողջությամբ վերացվել են խախտումները:

Իրավական հսկողության իրականացման ընթացքում անհրաժեշտ խորհրդատվություն է կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների իրականացման հարցերով:

Իրավական հսկողության բնագավառում նոր պահանջների ու մոտեցումների ներդրման արդյունքում բարձրացել է համայնքների ղեկավարների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների պատասխանատվությունը՝ օրենսդրությամբ, աշխատակազմի կանոնադրությամբ և համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերով իրենց վերապահված լիազորությունների իրականացման գործում:

Ելնելով ՀՀ կառավարության զարգացման ծրագրերով ամրագրված ինստիտուցիոնալ զարգացման, աղքատության հաղթահարման, տարածքների համաչափ զարգացման գերակայությունների տրամաբանությունից, վերահսկողության գործառույթի կատարելագործմանը զուգահեռ ավելի մեծ կարևորություն է տրվել մարզպետարանի համակարգման գործառույթներին:

Առաջնահերթ է համարվել համայնքներում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները հատկապես այն ոլորտներում, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով: Բայանդուր համայնքում ներդրվել է համայնքային

կառավարման տեղեկատվական համակարգ, իսկ Բենիամին և Լուսակերտ համայնքներում ՀԿՏ համակարգի ներդրման աշխատանքներ չեն իրականացվել՝ ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և ռազմական դրության պատճառով: Միջոցներ են ձեռնարկվել մարզի 42 համայնքներից 37-ում ներդրված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի անխափան շահագործումն ու ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող «Mulberry» համակարգի հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովելու և մարզի համայնքներում համացանցային պաշտոնական կայքերի անխափան շահագործումն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքի և ՁԼՄ-ների միջոցով համայնքներին իրազեկվել են տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների ու լրացումների մասին:

Հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ հանրային ուշադրությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների կողմից պարբերաբար իրականացվող մշտադիտարկումների առկայությունը, միջոցներ են ձեռնարկվել մարզի 10 հազար և ավել բնակիչ ունեցող համայնքներում՝ ավագանու նիստերի կամ հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումներն անխափան իրականացնելու, ինչպես նաև մարզի 3 հազար և ավելի բնակիչ ունեցող համայնքներում համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ապահովելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրելու ուղղությամբ:

Մարզի 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ու դրանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրումն ապահովելու համար, պարբերաբար իրականացվել է մշտադիտարկում և արդյունքները եռամսյակային կտրվածքով ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հստակեցվել, պարզեցվել և արդյունավետ է դարձել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդական օգնությունը, ապահովվել է մարզպետարանի և ՏԻՄ-երի համատեղ և համաձայնեցված գործունեությունը:

Մարզի 3 համայնքներում (Տուֆաշեն, Նահապետավան, Գեղանիստ) նախապատրաստվել և անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի) հերթական ընտրություններ, իսկ Պեմզաշեն համայնքի ղեկավարի և Նահապետավան համայնքի ավագանու անդամների ընտրությունները չեն կայացել ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) համավարակի հետևանքով ՀՀ-ում արտակարգ դրություն, ինչպես նաև ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք հայտարարվելու պատճառով:

ՀՀ Շիրակի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 262-Ա որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքում նշանակվել է համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով համայնքի նորընտիր ղեկավարի լիազորությունների ստանձնումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների բարելավման նպատակով զգալիորեն ավելացել են համայնքների կարողությունները: Շարունակվել են աշխատանքները բազմաբնակավայր միավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանների աշխատակազմերի գործունեությունը օրենսդրությանն ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված ուղեցույցներին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ:

2020 թվականի ընթացքում օրենքով սահմանված ժամկետում ապահովվել է մարզի բոլոր համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների առաքումը ՀՀ Շիրակի մարզպետարան: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգին համապատասխան, ուսումնասիրվել են համայնքապետարաններից ստացված ավագանու թվով 1356 որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Թվով 755 (55.7%) ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են համապատասխան առարկություններ և ապահովվել իրավական ակտերի համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը:

Ձեռնարկված միջոցների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ, էականորեն բարելավվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացը:

Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների կողմից մատուցվող առանձին ծառայություններ (աղբահանություն, գերեզմանատների շահագործում) մասնավոր հատվածի միջոցով իրականացնելու (պատվիրակելու) ուղղությամբ:

Ընտրանքային կարգով համայնքներում կազմակերպվել են համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեի կառավարման գործընթացների հանրային քննարկումներ:

Համայնքային ծառայություն

Սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել (գրություն՝ N 01//03766-2020, 07.04.2020թ.) 2020 թվականին վերապատրաստման ենթակա մարզի համայնքային ծառայողների ցուցակները:

Համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներ չեն անցկացվել՝ ՀՀ-ում արտակարգ դրություն, ինչպես նաև ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք հայտարարվելու պատճառով:

Մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում 2020 թվականի ընթացքում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի թվով 6 (Արթիկ, Ախուրյան, Անուշավան, Մեղրաշեն, Սպանդարյան և Գեղանիստ) համայնքների ղեկավարների կողմից թվով 30 համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման համար հայտարարվել են մրցույթներ:

Ապահովվել է մրցույթների անցկացման անխափան ընթացքը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Մշտապես հետևողականություն է հանդես բերվել, որպեսզի մրցույթների հայտարարությունները տեղադրվեն ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում, համայնքապետարանների և մարզպետարանի պաշտոնական համացանցային

կայքերում, փակցվեն համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներին, ինչպես նաև տեղադրվեն համայնքների և մարզպետարանի ֆեյսբուքյան սոցիալական ցանցի պաշտոնական էջերում: Սահմանված ժամկետներում (մինչև մրցույթների համար փաստաթղթեր ներկայացնելու վերջնաժամկետի ավարտը) կազմվել ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել հայտարարված բոլոր մրցույթների ժամանակացույցներն ու մրցույթների հայտարարությունները, միջոցներ են ձեռնարկվել մրցույթների պատշաճ անցկացման ուղղությամբ: Հայտարարված մրցույթներից կայացել են 29-ը, իսկ Ախուրյան (թվով 1 թափուր պաշտոն) համայնքում մրցույթը չի կայացել՝ մրցույթին մասնակցելու համար դիմումներ չներկայացվելու պատճառով: Անցկացված մրցույթների արդյունքների և մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների վերաբերյալ 2020 թվականի փետրվարի 28-ի N 01//02220-2020 և 2021 թվականի հունվարի 19-ի N 01//00280-2021 գրություններով ամբողջական տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

2020 թվականի ընթացքում համայնքային ծառայողների ատեստավորում չի անցկացվել ՀՀ-ում արտակարգ դրություն, ինչպես նաև ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք հայտարարվելու պատճառով:

Բավարար միջոցներ են ձեռնարկվել կադրային գործի վարման շրջանակներում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ: Մարզի համայնքապետարաններում բացառվել են աշխատանքային հարաբերությունների ձևավորման սահմանված կարգի խախտումների դեպքերը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

2020 թվականին ՀՀ Շիրակի մարզում արձանագրվել է հանցագործության 1259 դեպք (2019թ.-ին 1421), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 162-ով (12,8%):

2020 թվականի ընթացքում մարզում արձանագրվել է 587 արտակարգ դեպք (2019թ. նույն ժամանակահատվածում 749 դեպք), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 162-ով (21,6%):

Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև համագործակցված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ, որի արդյունքում ապահովվել է պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառներում օրենսդրությամբ պահանջվող աշխատանքների կատարումը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի ռազմական ոստիկանության և ՀՀ Շիրակի մարզի տեղական

ինքնակառավարման մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում ապահովվել են 2019 թվականի ձմեռային և 2020 թվականի ամառային զորակոչերի կազմակերպման ու անցկացման աշխատանքները: 2020 թվականի հունվարի 29-ին, օգոստոսի 5-ին և 20-ին անցկացվել են ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստեր, քննարկվել են տարկետման ներկայացված թվով 51 զորակոչիկների անձնական գործեր:

ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի քննարկումների արդյունքում տրված եզրակացությունները սահմանված կարգով ու ժամկետներում ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

Մշտապես ապահովվել է զորակոչիկներին ՀՀ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատից դեպի հանրապետական հավաքակայան ուղարկման պլան-գրաֆիկների տրամադրումը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությանը և վերջիններիս կողմից զորակոչիկների ուղեկցումը:

Իրավասու կառույցների համագործակցված աշխատանքների արդյունքում տարվա ընթացքում զորակոչի առաջադրանքը կատարվել է 108,8 տոկոսով, ռազմական դրության ընթացքում զորահավաքային առաջադրանքը կատարվել է ամբողջությամբ:

Համապատասխան հսկողություն է սահմանվել մարզի համայնքներում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնողների կողմից կատարվող աշխատանքների և ծառայությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ

2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմով պայմանավորված օպերատիվ իրավիճակի վերաբերյալ ամենօրյա պարբերությամբ ներկայացվել է համապատասխան տեխեկատվություն:

Կազմակերպվել է ՀՀ Շիրակի մարզի բնակիչ համարվող, զոհված զինվորական ծառայողների սոցիալական աջակցության կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթների հավաքագրման աշխատանքները, որոնք սահմանված կարգով ու ժամկետներում ներկայացվել են ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան վարչություն:

Զինվորական հաշվառման ընթացիկ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մարզի համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների համապատասխան աշխատակիցներին մշտապես ցուցաբերվել է մեթոդական աջակցություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N:298-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N:1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումներով պայմանավորված՝ մարզում կազմակերպված զանգվածային, հրապարակային միջոցառումների անցկացման, հուղարկավորությունների կազմակերպման ընթացքում ոստիկանության, շտապ բուժօգնության և փրկարար ծառայության համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում ապահովվել է մասնակիցների անվտանգությունը:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2020 թվականի հունվարի 8-ին հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2020 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլան-ժամանակացույցի համաձայն՝

դասընթացներին մասնակցել են տարվա ընթացքում պլան-ժամանակացույցով նախատեսված բոլոր 90 մասնագետները, որից 22-ը առկա, 68-ը հեռավար:

ՀՀ Շիրակի մարզպետարանում 2020 թվականի հունվարի 23-ին ներկայացվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության 2019 թվականի տարեկան հաշվետվությունը:

ՀՀ Շիրակի մարզում բնակչության պաշտպանության, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների վերացման, պատասխանատու կազմակերպությունների միջև փոխհամագործակցված աշխատանքների ապահովման նպատակով մշակվել են ՀՀ Շիրակի մարզպետի մի շարք որոշումների նախագծեր, մասնավորապես՝

2020 թվականի հունվարի 31-ի» թիվ 36-Ա որոշմամբ հաստատվել է «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների» պլանը,

2020 թվականի փետրվարի 21-ի թիվ 64-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2020 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» որոշումը,

Մշակվել և Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է մարզի տարածքում 2020 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիրը, որտեղ համայնքների ղեկավարները ներկայացրել են իրենց կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումների պլանը,

Մշակվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է 2020 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության «Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձանագրմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային օպերատիվ շտաբ ստեղծելու մասին» թիվ 108-Ա և մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային օպերատիվ շտաբի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 109-Ա որոշումները,

Շիրակի մարզպետի կողմից 19.03.2020թ-ին հաստատվել է Շիրակի մարզպետի 2014թ-ի հունիսի 5-ի ՀՀ Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողով ստեղծելու և ՀՀ Շիրակի մարզպետի 2007թ-ի հունիսի 12-ի N287 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N117-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին N114-Ա որոշումը:

Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է 2020 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» թիվ 155-Ա որոշումը,

ՇՄՓՎ կողմից առաջարկվել և Շիրակի մարզպետի կողմից 20.03.2020թ-ին հաստատվել է ՀՀ Շիրակի մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի N300-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին Շիրակի մարզպետի թիվ 116-Ա որոշումը,

Շիրակի մարզպետի կողմից 15.09.2020թ-ին հաստատվել է Շիրակի մարզպետի 2020թվականի մարտի 13-ի Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձանագրմամբ պայմանավորված ՀՀ Շիրակի մարզի

բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով ՀՀ Շիրակի մարզային օպերատիվ շտաբ ստեղծելու մասին N108-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N285-Ա որոշումը:

Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է 2020 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի հունվարի 31-ի թիվ 36-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 322-Ա որոշումը,

2020 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2021 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլան-ժամանակացույցը,

Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» թիվ 429-Ա որոշումը,

2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» թիվ 429-Ա որոշումը,

Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է 2019 թվականի դեկտեմբերի 04-ի «2019-2020 թվականների ձմեռային ժամանակահատվածում ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին բնակչության անվտանգ երթևեկությունն ապահովելու միջոցառումների մասին» թիվ 582-Ա որոշումը,

- Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Սարապատ միավորված համայնքի Լեռնագյուղ բնակավայրում անցկացվել է «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավների սպառնալիքի դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժություն: Մի շարք ուսումնական հաստատություններում անցկացվել են «Պատսպարման կազմակերպումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում», «ԱԻՆ գործառույթները և խնդիրները բնակչության պաշտպանության բնագավառում» թեմաներով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ուսումնական հաստատություններում կազմակերպվել և անցկացվել են դասախոսություններ ու վարժանքներ: Պլանով նախատեսված 163 միջոցառումներից իրականացվել են 22-ը: Մնացած 141 միջոցառումները չեն իրականացվել՝ պայմանավորված ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության շրջանակում գործող սահմանափակումներով:

2020 թվականի ընթացքում առկա և հեռավար կարգով կազմակերպվել է քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների շտաբների պետերի հրամանատարական պատրաստության պարապմունքներ՝ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության մասնագետների մասնակցությամբ:

«COVID-19»

ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության շրջանակում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն երկօրյա պարբերությամբ ներկայացվել է

հաշվետվություն՝ ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից կատարված ախտահանման աշխատանքների վերաբերյալ: Իրազեկման նպատակով, ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին մշտապես ուղարկվել է ՀՀ պարետի համապատասխան որոշումները:

Մշտապես անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել «COVID-19» կորոնավիրուսային համավարակի կանխարգելման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, ապահովվել է ՀՀ Շիրակի մարզպետի 2020 թվականի մարտի 13-ի թիվ 108-Ա որոշմամբ ձևավորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային օպերատիվ շտաբի նիստերի հրավիրումն ու աշխատանքների կազմակերպումը:

ՀՀ պարետի որոշումների պահանջների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով, սահմանվել է համապատասխան հսկողություն՝ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարման ենթակա աշխատանքների ուղղությամբ՝ ցուցաբերելով հնարավոր աջակցություն: Պարբերաբար կատարվել են նաև այլ տեղեկատվությունների հավաքագրման, մշակման ու ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և այլ պետական մարմիններ ներկայացնելու աշխատանքներ:

Կարևորելով քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներում բնակչության ազդարարումը՝ մարզի 42 համայնքների թվով 44 բնակավայրերում կազմակերպվել և սարքին վիճակի են բերվել չաշխատող էլեկտրաշչակները, ինչպես նաև տեղադրվել են նորերը, մարզում տեղադրված են և գործում են 65 էլեկտրաշչակներ:

Վարչության աշխատակիցները ընդգրկվել են 2020 թվականին մարզում տեղի ունեցած բնական աղետների (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ) պատճառով տուժած՝ թվով 52 համայնքներում վնասների չափերն ուսումնասիրող աշխատանքային խմբերի աշխատանքներին:

Մարզի համար նշանակալի ձեռքբերում է եղել և ՀՀ կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրի» շրջանակներում 2017 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ կառավարության և Ճապոնիայի միջազգային գործակալության (JICA) միջև կնքված դրամաշնորհային համաձայնագրով 2020թ. փետրվարի 2-ին ՀՀ Շիրակի մարզին հատկացվել է թվով 6 «ISUZU» մակնիշի հրշեջ-փրկարարական ավտոմեքենա, համապատասխան գույք և սարքավորումներ:

2020թ-ի ընթացքում արտակարգ դեպքերի հետևանքով մարզին հասցված նյութական վնասը կազմել է՝ 2 մլրդ 968 մլն 538 հազ 591 դրամ:(2019թ-ի նույն ժամանակահատվածում՝ տարերային բնույթի ԱԻ դեպքերից պատճառած նյութական վնասը կազմել էր 4 մլրդ 756 մլն 409 հազ 797 դրամ), տարերային բնույթի ԱԻ-ներից պատճառված նյութական վնասը նվազել է 1 մլրդ 787 մլն 871 հազ 206 դրամով, կամ 37,6 %-ով:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի դատախազի 2020 թվականի մարտի 23-ի թիվ 64 միջնորդության՝ ՀՀ Շիրակի մարզում բնակարանային գողությունների դեպքերի

բացահայտումների ցուցանիշը բարելավելու նպատակով, ՀՀ Շիրակի մարզպետի մոտ անցկացվել է խորհրդակցություն մարզի դատախազի, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի և մարզի խոշոր համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Համայնքների ղեկավարներին առաջարկվել է համայնքների տարածքում, հատկապես՝ բազմաբնակարան շենքերի մոտ, տեղադրել տեսախցիկներ: Քննարկումների արդյունքում մարզի մի շարք համայնքներում տեղադրվել են նոր տեսախցիկներ:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության հետ համագործակցված աշխատանքի արդյունքում պատշաճ կարգով ապահովվել է մարզում անցկացված մի շարք հանրային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանությունը:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ

Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամասի, ՌԴ 102-րդ ռազմաբազայի, մարզպետարանի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման ուղղությամբ:

2020 թվականի հունվարի 28-ին ՀՀ զինված ուժերի կազմավորման 28 ամյակի, «Բանակ-հասարակություն» կապի ամրապնդման և մարզային նախաձեռնություններին ակտիվ մասնակցության համար ՀՀ Շիրակի մարզի 2 զորամասերի թվով 5, ինչպես նաև ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման թվով 2 ծառայող պարգևատրվել են շնորհակալագրերով:

ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության շրջանակում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ամենօրյա պարբերությամբ ներկայացվել է տեղեկատվություն՝ ՀՀ Շիրակի մարզի համայնքներում կցագրված բնակչության պաշտպանական կառույցների մաքրման և շահագործման հանձնելու վերաբերյալ:

Քննարկվել և համապատասխան առաջարկություններ ու կարծիքներ են ներկայացվել մի շարք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

Կատարվել են ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված, ինչպես նաև ՀՀ վարչապետին և պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված թվով 63 դիմումների քննարկում, ուսումնասիրություն և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

Իրականացվել են թվով 964 տարաբնույթ հանձնարարականների ու գրությունների քննարկման, ամփոփման և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՏԻ ԵՎ ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ